

տարակած է Հ. Ղ. Ալիշան իւր Կամենիցի² մէջ «Վիպասանութիւն Նիկոլական» խորագրոյ տակ: Ասոր կցած է հրատարակիչը հետեւեալ ծանօթագրութիւնը (էջ 202, ծանօթ. 1). «Այսպէս անուանեցինք զգրուածս, որոյ սկիզբն եւ վերջն այլ պակաս ըլլալով մեր միակ ծանօթ օրինակին մէջ, անձանօթ մնայ բուն վերնագիրն եւ հեղինակն. որոյ այրած սրտով ըսածներն՝ յայտնեն որ ժամանակակից էր. զնոյն յայտնէ եւ Վարդանայ Յոփանեան անկէ առած վկայութիւնն. եւ թուի <հեղինակն> ի Փոքր Հայոց կողմէն դադրած»: Գրուածքիս հեղինակին անունը անձանօթ մնացած է նաեւ Վարդան Յունանեանի, Լվովի արքեպիսկոպոսին, որ ժԼ. դարու սկիզբը աչքի առաջ ունեցած է Վիպասանութիւնս եւ անկէ Տ տող յառաջ բերած է իւր առ Եւզոկիացիս դրած Թուղթին մէջ, «գորոց երբեմն գրեաց ոմն» ըսելով (Կամենից, էջ 127): Անշուշտ Յունանեան յանուանէ պիտի յիշէր այդ «ոմն»ը, եթէ ծանօթ ըլլար իրեն հեղինակին անունը: Հ. Ալիշանի ենթագրութիւնը, թէ հեղինակը «թուի ի Փոքր Հայոց կողմէ դադրած», յեցած է հաւանօրէն լեզուական ինչ ինչ ասութեանց վրայ, որոնք առաւելապէս Փոքր Հայոց բարբառին յատուկ են. առ այս կարող է նաեւ «չտեսի յայլ տեղ սոցա նման» տողը (էջ 202) առիթ ընծայած

² Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռուսիոյ հաստատեայ յաւելուածովք. Վեներիկ 1896, էջ 202—214: